

## Ինչ՝ «Հայկական» Լաւաշը

Պարսկաստանում ԼԱԻԱԾ-ն անուանում է »հայկական հաց« /nuni armani/:

Աշխարհն այսօր ճանաչում է ԼԱԻԱԾ-ը որպէս »հայկական« հաց: Այս քառը մտել է նոյնիսկ ոռութերեն խոսակցական լեզուի բառապաշարի մեջ եւ երբ քուարկում են Էկոուրիզմները (կոլորիտ ստեղծող բառեր), ապա ի թիս այլ ժողովուրդներից վերցուած փոխառեալ բառերի (տես Խզվեստիա, 1986թ նոյեմբեր, »Ի՞ն լեզուն իմ բարեկամն է« յօդուածը), անպայման նշուում է նաև հայոց ԼԱԻԱԾ-ը: Բայց ի՞նչ է նշանակում ԼԱԻԱԾ: Լեզուն տեղափոխուելով պատճառով շատ անգամ տեղի է ունենում նաև իմաստային փոփոխութիւն: Այսպէս է տեղի ունեցել նաև հայոց ԼԱԻԱԾ -ի հետ: Այն հայերէն չէ: Հայերը վերցրել են ԼԱԻԱԾ-ը իրենց սեմական հարեւաններից, արամեացիներից եւ կամ աւելի վաղ նրանց նախորդներից՝ ակկադացիներից, որոնց լեզուում լաշն նշանակում էր »խմոր«:

Հայերէնին անցնելով լաշն դարձաւ **լոշ**, իսկ աւելի վաղ, քանի որ **օ-ն** հնչում էր **ալ**, ինչպէս ունենք **ալր**, քայց յեսոյ՝ **օր**, **ալքուտ**, ապա՝ **օքուտ**, եւ այլն, այն հաւանաբար երկրաբարբառի առձգման հետեւանքով **լաաշ** սպասուած ձեւի փոխարէն եղել էր ԼԱԻԱԾ եւ ապա Միջին դարերի հայերէնի հնչինափոխման կանոնների հիման վրայ դարձել է **ԼՈՇ**: Սակայն ըստ երեւոյթին, հետագյում երբ Հայաստանի հարակ ասորինների մեծ մասը հայացաւ եւ հարեւան ժողովուրդներն էլ հայերից սովորեցին բարակ հաց թխելը, ուստի եւ ԼԱԻԱԾ կամ **ԼՈՇ** անանումն էլ ենթադրեցին, թէ հայերէն բառ է:

Այստեղ տեղին է յիշատակել նաև ԹՌՈՆԻՐ քառը, որը նոյնպէս Միջաֆորի սեմիտներից է հայերէնին փոխանցուել (եւ բնականաբար ԼԱԻԱԾ-ը թխել հնարաւոր է միայն ԹՌՈՆԻՐ-ում), որի պատճառով էլ անհետացած հայոց հարեւանների լեզուի այս քառերը, հայերէնի միջոցով է աշխարհն իմացել: Եւ այսպէս ԼԱԻԱԾ-ը կոչում է »ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՅ«, մինչդեռ այն ԽՄՈՐ է... այն էլ ոչ հայկական: Բայց արժէ կոչել ԼԱԻԱԾ-ը հայկական, քանի որ դարերի խորքից հնադարեան այս քաղաքակրթութեան նւաճումը հայոց շնորհի է հասել մարդկութեան: